

Այս օրինակ տրտմալի խորհրդաւ ծութիւններով լեցուն էր անցեալ տարին . բոլոր ազգասիրաց և բարե պաշտ ազգայնոց ուշն ու միտքը դարձած էր դէպ յարեւելս, դէպ ի սուրբ Աշմիածին մայր Աթոռն առաքելական, դէպ յԱթոռն Ալսոյ և Աղթամարու, որոնք երեքն ալ այրիացեալ իրենց Փեսայէն՝ տրտմութեամբ կը լնուն ազգին սիրու, հարկ ի վերայ դնելով անոր՝ չտալ տեղի Առւրմակ ներու ու Բրբիշոյներու, այլ յարուցանել յորդւոց և ի թոռանցն Գրիգորի Ներսէաներ ու Աահակներ :

Իսկ ի մուտս նորոյ տարւոյ, երբ կը տեսնեմք որ սոյն ազգային անյաջող վիճակը առանց փոփոխութիւն մի ընդունելու դէպ ի լուն, կը շարունակէ ի մեծ տրտմութիւն Աղգասիրաց, կը աեմնեմք միւս կողմէն ալ մը խիթարութեան կայծ մի, ուրախութեան նշոյլ մի, Արբոց Յակոբեանց առաքելական Աթոռոյն վրայէն դէպ առ որդիսն Հայկայ արձակեալ: Ոչ ի պարծանս ինձ ասեմ, բատ Պաւղոսի, քաւ լիցի, այլ Եթէ Ա. Աթոռոյս ներկայ վիճակին վերայօք կայ տեղի պարծանաց, այն ի շնորհս ազգին է:

Երբ կը տեսնեմք այն զգալի փոփոխութիւնը միաբանական Աւատիս և ի հոգեւորական զարգացումն, երբ կը տեսնեմք այն յառաջադէմ քոյլերը, զոր ծանր բայց հաստատուն ընթացքով մի. կ'արձակեն դէպ ի այն նպատակը՝ զոր Նախնիքն մեր հաստատերէին, արդարեւ կ'ըզմայլի զգայուն Հայում մի սիրու, և պահ մի կանգ առած կը սկսի խորհեւ տրտմութեամբ մի անցելոյն վերայ և ճշմարիտ ուրախութեամբ մի ներկայիս վերայ, որոց բարիքները առ աջօք չեն, այլ իրականութիւններու: Առաւել զարմանալոյ արժանի է հանճարասէր դիտողի աչ-

քին սուրբ Աթոռոյս ներկայ վիճակը, երբ նկատելու ըլլայ՝ թէ այս յառաջա զիմութիւնները կը պարտաւորի երկնաւոր Հօրմի առտուածային խնամոց՝ և ոչ թէ նիւթական արդիւնքներու, յորոց զուրկէ Աթոռս առ անաջողութեան ժամանակին:

Աւրիշ ժամանակ առիթ պիտի ունենամք սոյն յառաջագիմութեանց վերայ խօսելու և նոր հպատատութեանց վերայ մանրամասն տեղեկութիւններ հաղորդելու մեր բարեսիրտ Ազգին, որոց սիրու լեցուն է ակնկալութիւններով, որպէս զի և մեք ըստ մեր բաղձանաց պարտավճար ըլլամք, և անոնց ակնարկութիւնը դարձընեմք դէպ առ Աթոռը Աթոռս և առ պաշտպանս նորին սուրբ Առաքեալն Յակոբոս սիրելի աշակերտն Վրիստոսի և արքարն Յակոբ՝ առաքելապետըն և փոխանորդն նորին, որոց ի պատիւ նուիրեմք և զմեր աշխատաւթիւնս:

Ա. Թ. Գ. Ե. Յ. Ի.

Ա. Զ. Դ. Կ. Ա. Ր. Ա. Բ. Ո. Ւ. Խ.

Ա. Աթոռոյս Ճառանդաւորաց դպրոցին օր յառաջ ծաղկելուն և կարգաւորութեանը համար ասկէ իբր չորս հինգ ամիս յառաջ փաւթաց Ամենապատիւ Արբազան Պատրիարք Հայութ իւր առաքելական անդրանիկ օրհնութեանցը շրջաբերական կանգակին հետ՝ միանգամայն և յիշեալ Դպրոցին համար եւս աշակերտացու տղայք ժողվելու նպատակաւ առանձին ասկեալ նամակներով յատուկ ցուցակներ եւս յուղարկել առաջնորդանիստ դաւառաները, որպէս զի ըստ պայմանաց ցուցակին՝ իւրաքանչիւր գաւառներէ մէկ մէկ աղայ ընտ-

բանօք որոշելով խրկենի ի լ . Աթոռս
մինչեւ ի լ . Օտափիկ . և ըստ սահ-
մանեալ կանոնաց սկսուի անոնց դա-
սական ընթացքը : Վանի մի գաւառ-
ներէ , ինչպէս որ կը լսէ մք , ցուցա-
կին պայմանացը համեմատ պատրաս-
տած են տղայք և խրկելու վերայ են ,
բայց կ'իմանամք որ քանի մի տեղ ալ
մինչեւ հիմոց ոչ նամակներն եւ ոչ
ցուցակները հասած են Վերապատիւ-
Նուաջնորդաց և կամ թաղական խոր-
հըրդոց մեծարց Անդամոց ձեռքը .
Այս ակամայ և կամ որ և իցէ պատ-
ճառաւ եղած զանցառութիւնը բա-
րեքելու համար , արժան համարե-
ցինք այս տեղ մասնաւոր կերպով նը-
շանակել , և յորդորել զՎերապատիւ-
Նուաջնորդները իւրաքանչիւր վիճա-
կաց , որպէս զի առանց ժամանակ
անցընելու վութան ըստ պայմանաց
ցուցակին խրկել աշակերտացուները
յառաջ քանի զուրբ Օտափիկը :

Հուցակը գեռ ընդունող վիճա-
կաց գիւրութեանը համար կարեւոր
կը գտափիմք կրկնել հոս թէ անոր
և թէ տպեալ նամակին օրինակը :

ՊԱՅՄԱՆԵՐԻ

Սուրբ Աթոռոց ընդրելք աշխիւրաց Ճա-
շայը իւմ ինամակալուաց հետ :

1. Ակաղ պատանին պէտք է որ
իւր հետն ունենայ Ա . Աթոռոցս
կնքով * կնքեալ ներկայ Տոմսականը-
շանակուած ըլլարով հինգ պայմանաց
դիմացի պարագ՝ էջին մէջ պահան-
ջուած հանդամանքներն ամենայն ճըշ-
տութեամբ :

2. Եթէ որոշուած պատանին Տոմ-
սակին մէջ նշանակուած հանդամա-
նաց մէկուն դէմ պակասաւոր գլու-

նուի , անմիջապէս ետ կը խրկուի ,

3. Շամբուն ծախքը ծնողը , կամ
ինամակալուք , կամ տեղայն հասա-
րակութիւնը պարտի հոգալ , նմանա-
պէս ըստ երկրորդ պայմանին՝ թէ որ
ետ խրկուելու ըլլայ պատանին , դար-
ձեալ իրենք պիտի հոգան ճամբուն
ծախքը :

ՏՈՄՈՒԵԿ

Բնութանելք աշխիւրաց Ճաշանդարաց
Դպրուցին սուրբ Յակովեան վանոց
Երանուշէդի :

ՀԱՆԳԱՄԱՆՔ

Օդ պէտք է ունենան աշխիւրաց ըստ հե-
տակայ անկրծելու պահանջանց :

1. Հասակնին պէտք է ըլլայ տա-
սըն և վեցէն մինչեւ տասն և ութ
տարեկան :

2. Բալբերնին ու վարքերնին ա-
նարատ ու պարկեցու :

3. Ակրաող քահանայն պէտք է
վկայէ անոր մկրտեալ ըլլալուն , նոյն
պէս կնքահօրն անունը , և տղուն ծը-
նած օրն ու տարին պէտք է նշա-
նակուի :

4. Իւր մայրենի լեզուին հասա-
րակ ընթերցանութեան ու գրու-
թեան մէջ վարժ ըլլայ :

5. Որովհետեւ եկեղեցականու-
թեան սահմանեալ է , պէտք է որ
մարմնոց կողմանէ * անարատ ըլլայ և
անձամբ առողջ :

* Անարատ կըուի տղայ մի , թէ որ չէ կալ ,
խուլ , ներքինի , ձեռնատ (չօլոք) , միականի , լուս-
նատ (սարալը) , պնդատ (պուրունորդ) , շակն ,
կարմատես , գոմի (քէլ) , և թլուատ :

* Առանց կնքոյ եղած Տոմսակը խարդախեալ
կը համարուի :

ՏՊԵԱԼ ՆԱՄԱԿԻՆ ՕՐԻՆԱԿ

Բայտ տնօրէնութեան Ա. Աթոռոցս , որպէս յայտ է , հաստատեցաք ի նորոյ և դասարան մի յատկացեալ վասն Ժառանդաւորաց , զօրոյ և զա շակերտոսն որոշեցաք ածել ընտրանօք յիւրաքանչիւր վիճակէ մէն մի , որ պէս զի զնորհս Ա. Աթոռոցս ամենայն ազգ մեր վայելիցէ . և այն ըստ պայմանացն զօր ունիք տեսանել ի ներփակեալ թղթիս , որ է միանդամայն և Տոմսակ ընդունելութեան պատանեցն : Առաքելով և առ Առառածաշնորհ Ազգայրութիւն ձեր օրինակ մի ի յիշեալ Տոմսակաց՝ կը բեկալ մատոնեաւ մերով , յանձնեմք Խոհեմութեան ձերում ընտրել և ի վիճակէ ձերմէ պատանի մի ոչ ի հարբարաց , այլ յաւէտ ի միջակացնոց և ի չքաւորաց . միայն զի իցէ բարուքն և վարուք պարկեցն և յարմարեկեղեցականութեան , և վարժ դունէ ի հասարակ ընթերցանութեան : Աւ յայսմ ընտրութեան պարտի իւրաքանչիւր ոք վարիլ առանց աշտութեան , ունելով կէտ նպատակի մասցն զօդուտն սրբոյ Ակեղեցւոյ : Յետ գտանելոյ զոմն ի յարմարագունից , եթէ իցէ նա կարօտաւոր ծնողաց որդի , պարտ է գտանել նմա և խնամակալու զոք յերախտաւոր երեւելեաց ժողովրդեանն , և կամ գէթ ի հասարակաց արկեղէ հոգասցին ծախսք ձանապարհի պատանեցն :

Որպէս յայտ է , յերկրորդում էջի Տոմսակին պարտին յանդիման իւրաքանչիւր հինգ յօդուածոց նշանակել զշասակ , զլարս , զանուն մկրտող քահանային և զինքահօրն , և զամ և զօր ծննդեան պատանեցն . նոյնպէս և զկարողութիւն նորա ի մայրենի լեզուին ընթերցանութեան , և զանա-

րատութիւն նորին ի կողմանէ մոր միոյն . և որպէս յայտնի նշանակի երկորդ պայմանաւու , եթէ պատանին գըտանիցի թերի միով և եթ ընդդէմ պայմանեալ պահանջանաց , առանց աշառութեան յետս առարի :

Ի վերջէ յանձն արարեալ զընտրութիւն աշակերտելի պատանեցն՝ խոհեմութեան աստուածաշնորհ Ազգայրութեանդ , առաքել զնոյն ի Ա. Աթոռու յառաջ քան զուրբ Օատիկըն , մնամք աղօթարար վասն ձեր և համօրէն Ազգիս :

ՅԵՐԱՎԱՐԱՂԵՅ .
ԽԱՅԻ Ս. Յ-Ի-ՔԵԿԵՆՅ , 1865 .

ԳՐԱԴԱՐԱՆ

ԱՇԱՅԻ ՀԱՐՃԱՊԵՏ ՆԵՐ :

Ազգային մատենագրութեանց և անհոյ հեղինակաց պատմութիւնը որքան որ կարեւոր համարուած է , ոյնքան եւս աւելի կարեւորագոյն ձշութիւն կը պահանջուի պատմութեան պայմաններուն մէջ : Ո՞ր աղգային մատենագրութեանց՝ թէ հեղինակութիւն ըլլան և թէ թարգմանութի , մէծագոյն մասը անտիպ կը մնան , վասն որց և ազգին գրադիտաց առաջը շըլլովի՝ աղատ մնացած են բանագրատութենէ ու անաշառ քըննութիւներէ : Կան ուրեմն հայ գըլլութեանս վերաբերեալ շատ մատենագրութիւններ , որոնց հեղինակները՝ առանց իրենց երկասիրութիւնները տպագրութիք մէջ բերուելու , ոչ արդարացի քննութեան տակ ինկած են , և ոչ պատմութեան մէջ իրենց՝ արժանաւոր յարգը գտած ,